ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀԱՆԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի բացման նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 04.11.2026թ. ժամը 14:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Անահիտ Հովսեփյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Արսենյան
	Վերգինե Թառլոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Սուսաննա Գասպարյան

Ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը համարեց բացված:

1. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**

(Անահիտ Հովսեփյան)

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ. փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից չեն ներկայացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին,**

(Անահիտ Հովսեփյան**)**

- բացառությամբ <<Իվաֆարմ>> ՍՊԸ-ի և <<Պրոֆ Տեստ>> ՍՊԸ-ի:

Մասնավորապես <<Իվաֆարմ>> ՍՊԸ-ի կցած հայտի 1-ին, 2-րդ և 6-րդ չափաբաժինների առաջարկվող ապրանքների նկարագրերի արտադրողի անվանումը սյունակները լրացված չեն հրավերի պահանջներին համապատասխան, իսկ <<Պրոֆ Տեստ>> ՍՊԸ-ի կցած հայտի դիմում հայտարարությունը /հավելված 1/ հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, իրական շահառուների վերաբերյալ հայտարությունը/հավելված 1.3/ բացակայում է, ինչպես նաև առաջարկվող ապրանքների նկարագրերը ֆայլի սյունակները լրացված չեն հրավերի պահանջներին համապատասխան :

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

3. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**

(Անահիտ Հովսեփյան**)**

- Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

4. **Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին**

(Անահիտ Հովսեփյան)

- Բողոքներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

5. Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին

(Անահիտ Հովսեփյան)

- Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

6. Գնահատող հանձնաժողովին ուղղված այլ գրություններ

(Անահիտ Հովսեփյան)

- Սույն թվականի նոյեմբերի 3-ին <<ՊՐՈՖ ՏԵՍՏ>> ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, որում հայտնում է հետևյալը.
  ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/1 ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի գնային առաջարկի մուտքագրման ընթացքում տեղի է ունեցել տեխնիկական և մեխանիկական սխալ՝ նախատեսված 15 550 000 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնի փոխարեն մուտքագրվել է 1 555 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և համակարգ կցել շտկված փաստաթղթերը: Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի նոյեմբերի 6-ին ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Հանձնաժողովի քարտուղարին ապահովել ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված և սույն նիստին ընդունված որոշումներից բխող բոլոր գործողությունները և տեղեկատվության հրապարակումը:

Հանձնաժողովի նախագահ՝ Անահիտ Հովսեփյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Արսենյան

Վերգինե Թառլոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սուսաննա Գասպարյան